ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-փետրվար)





2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 433.6 մլրդ դրամ, ինչը 285.4 մլրդ դրամով կամ 192.6%-ով ավել է 2022թ. և 305 մլրդ դրամով կամ 237.2%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 280.7 մլրդ դրամով կամ 183.6%-ով: 2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 236.2 մլրդ դրամ, ինչը 134.5 մլրդ դրամով կամ 132.3%-ով ավել է 2022թ. և 140.7 մլրդ դրամով կամ 147.3%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 150.7 մլրդ դրամով կամ 176.3%-ով: 2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 197.4 մլրդ դրամ, ինչը 150.9 մլրդ դրամով կամ 324.5%-ով ավել է 2022թ. և 164.3 մլրդ դրամով կամ 496.4%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 130 մլրդ դրամով կամ 192.9%-ով:

2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 մլրդ 100 մլն դոլար, ինչը 792 մլն դոլարով կամ 257.1%-ով ավել է 2022թ. և 853.8 մլն դոլարով կամ 346.8% -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 713,9 մլն դոլարով կամ 184,9%-ով: 2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 597,7 մլն դոլար, ինչը 386,2 մլն դոլարով կամ 182,6%-ով ավել է 2022թ. և 414,8 մլն դոլարով կամ 226,8%- ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 381.8 մլն դոլարով կամ 176.8%-ով: 2023թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 502.3 մլն դոլար, ինչը 405.7 մլն դոլարով կամ 420%-ով ավել է 2022թ. և 439.1 մլն դոլարով կամ 694.8%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվարի ցուցանիշից ավել է 332.1 մլն դոլարով կամ 195.1%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**